


## ԿԻՒՐԻՆԻ ՅՈՒՇ



«Կիւրին Յուշ» պարբերաբեր-  
քը սկսաւ լոյս տեսնել 30 նոյեմ-  
բեր 1930, Նիւ Եորքի մէջ, պատ-  
մական, գրական եւ ազգագրա-  
կան բովանդակութեամբ: Խըմ-  
բագրական կազմի մէջ էին՝ Սու-  
րէն Սուրբենեան, Խաչատուր Մա-  
կարեան, Թադէոս Ծառուկեան և  
Յարութիւն Սիրամասեան:

Կը հրատարակուէր տարին 3  
քիւ միայն, հոս կու տանք իր  
ծրագիրներն ու հեռանկարները  
պարզող առաջին քիւի խմբագ-  
րականը, որ կը կրէ «Սորհըր-  
դածութիւն» վերնագիրը:—

«Մեր մօտիկ անցեալի սեւ օ-  
րերն ու ապրումները դեռ մեր  
հոգիէն ներս կը ստուերեն իրենց  
մահաչունչ պատկերները ուր-

ուականներու նման: Կը սարսուռնք պահ մը, կը ցնցուինք այդ անեղ օրերու  
քաղաքական աննկարագրելի հալածանքներն ու արհաւիրքները մտաբերելով:

«Ամբողջ հայ ազգի ցաւն է այդ, դժբախտ ազգի մը պատմութիւնը:

«Կիւրինի հայութիւնն ալ, սեւ օրերու քաղաքական անեղ հորդաններու  
առջեւ ջրուեցաւ կորաքամակ դէպի մահուան ու շարշարանքի արիւնոտ գող-  
գոթան անիննայօրէն: ... Կրեց բոլոր անլուր տառապանքները, կորսնցուց  
իր ողնոսկրը եզող երիտասարդ այր մարդիկը, որոնք անմեղ գոհերը դարձան  
անգութ թուրքի սուրին... Հազարաւոր ընտանիքներ անտուն, անտէր որբե-  
րով աքսորի ճամբուն վրայ, անապատներու մէջ կմախքացան ու մահացան:

«Ու կորսուեցան հարստութիւն ու կալուածք, տուն ու երգիք աւերակ  
դարձան, մոխիրներու տակ թաղելով հայրենի տան կեանքն ու վայելքները,  
փառքն ու բոլոր հին ու նոր յիշատակները...:

«Այդ մեր սեւ անցեալն է, ուրիշ մաղապուրժ ազատուածներս, թիւով  
չատ քիչ, յաճախ կը վերջիչենք այդ դառն օրերը: Յիշողութիւն... ու անա  
անցեալը շարժապատկերի ժապաւէնի մը պէս կը քակուի մեր աչքին առջեւ

ու կը զգանք, որ մեր մարմինն լրայ կրած վէրքերը դեռ թարմ են ու կ'արևնին:

«Մեզմէ ամէն մէկը իր պատմութիւնը ունի. ոմանք տխուր, ոմանք ժպտուն, մէկը աքսորի ճամբէն, միւսը հայրենի թոնրատան երջանիկ օրերու հէքիաթները կը պատմէ, կը լսենք յափշտակուած, ուրախութիւն կը գտնենք այդ անցեալի յուշերուն մէջ: Կը յուզուինք, կը խնդանք երբեմն ու խօսքը կ'անցնի, կը յամրանայ, կ'անհետի ստուերի մը պէս:

«Ուրիշ առթիւ, ուրիշ տեղ հաւաքուած են հայրենակիցներ, կրկին հայրենի յուշեր, զգացում, երեւակայութիւն, խանդավառութիւն եւ կրկին մուխի մը պէս անէացած:

«Ինչո՞ւ այսպէս հայրենի քաղցր յիշատակները թողունք որ մոռացութեան մատնուին: Այդ յուշերը մեր պապենական տան, տոհմային, ընտանեկան, մեր նախնեաց եւ մեր կեանքի անգիր պատմութիւններն են, ինչո՞ւ մութին մէջ թողունք զանոնք:

«Քանի կեանքը սերունդէ սերունդ կը կտակէ մեր ցեղային, գերզատանի, ընտանեկան անուններու ժառանգը, ուրեմն անհրաժեշտ է, որ այդ անցեալի անգիր պատմութիւնները արձանագրուին, լոյս տեսնեն, կտակելու համար զանոնք հասնող սերունդին, քանի ուշ չէ:

#### ԱՅՍ ԶԵՌՆԱՐԿԸ

«Դժբախտաբար Կիւրինի եկեղեցական, քաղաքական կամ բարեսիրական կազմակերպութիւնները Կիւրինի հին կեանքն ու դէպքերը նկարագրող յիշատակարան մը չեն թողուցած մեզի, եւ կամ եթէ ունեցած են, կորսուած ըլլալու է շատ մը բաներու հետ: Վահանեան Ընկերութիւնը, կամ Ամերիկայի նախկին Ուսումնասիրացը՝ յետոյ Վերաշինաց եւ ներկայիս Հայրենակցական Միութիւնը նոյն նիւթը շօշափող արձանագրութիւններ չեն ունեցած, որքան որ գիտենք:

«Կիւրինցին պէտք է ունենայ յուշատետր մը, հոն պատկերացնելու համար իր անցեալն ու ներկան, հոն արձանագրելու համար աշխարհի չորս կողմ ցիրուցան եղած Կիւրինցի հայ հայրենակիցներու առօրեայ կեանքն ու ապրումները ու գէթ թերթի մը միջոցաւ զգացումներով իրարու մօտիկ զգալու:

«Որպէսզի գործնական քայլ մը առած ըլլանք դէպի այդ ձեռնարկը, պատշաճ սեպեցինք թերթիկի ձեւին տակ հրատարակութեան տալ առաջին թիւը, զայն անուանելով «Կիւրինցի Յուշ», պարբերաթերթ մը, որ խնամքի ու գուրդուրանքի կը կարօտի իր առաջին քայլին: Յաւանութիւնը չունինք երբեք թերթ հրատարակելու կոչումն ունենալու, չնայելով նաեւ մեր տկար դրչին եւ միեւնոյն ատեն նիւթական անպատրաստ վիճակին: Պարզապէս հայրենակցական զգացումէ դրդուած, նախաձեռնարկ ըլլալով, պիտի աշխատինք անհրաժեշտ եւ օգտակար եղող այս դժուարին գործը գլուխ հանել, ապաւինելով ազնիւ զգացումի տէր մեր հայրենակիցներու նիւթական եւ բարոյական գործնական օժանդակութեանց: Ուրեմն «Կիւրինցի Յուշի» նպատակը պիտի ըլլայ.—

«Ա.— Ինչպէս իր անունը, բաց յուշատետր մը պիտի ըլլայ ան, բոլոր Կիւրինցի հայրենակիցներուն համար միայն, հոն արձանագրելու իրենց անցեալի յուշերն ու ներկայի ապրումները:

«Բ.— Պիտի ըլլայ հաւաքածոն մեր հայրենի երգիքին տակ ապրուած եւ

մեր պապերէն մեզի մնացած սովորութիւններու, ինքնայատուկ բարբառը եւ դրոշմը կրող լեզուին, երգերուն եւ ասացուածքներուն :

«Գ. — Ան պիտի ըլլայ, իր կարողութեան ներած չափով, ուսումնասիրողը Կիւրիւնի քաղաքական, կրօնական, կրթական, ազգային, առեւտրական եւ ժողովրդական մէն մի խաւի յատկութիւնները վերլուծող նիւթերու :

«Դ. — «Կիւրիւնի Յուշ»ը պիտի ըլլայ նաեւ Ամերիկայի եւ արտասահմանի հայրենակիցներու եւ նոր սերունդի սրտին թարգմանը : Կիւրիւնի Հայր Միութեան դործունէութեան արձանագրողը եւ հետեւողը՝ ամէն միջավայրի մէջ հայրենակցական կեանքի անցուղարձերուն :

«Մեր այս պատմական, ուսումնասիրական եւ մասամբ գրական բաժինները կը վերաբերին անցեալին : Դժբախտաբար չենք ունեցած պատմաբաններ կամ օրագրողներ, որ անոնց մեզի հասցուցած թուղթերէն կարենայինք աղբիւրներ ունենալ վերեւ յիշուած նիւթերու նկատմամբ, սակայն բարեբախտաբար ունինք ապրող ազնիւ Կիւրիւնցի հայեր, որոնց յիշողութիւնը թարմ է տակաւին Կիւրիւնով եւ կրնան անոնք դրել կամ դրել տալ «Կիւրիւնի Յուշ»ի համար» :

«Կիւրիւնի Յուշ»ը երեք տարի եղաւ հաղորդակցութեան կարեւոր շաղկապ մը զանազան երկիրներու մէջ գտնուող հայրենակիցներու եւ միութիւններու միջեւ : Դժբախտաբար կանգ առաւ : Մենք այս հատորին մէջ առինք «Կիւրիւնի Յուշ»էն, պատմական, գրական եւ տեղեկագրական յօդուածներ եւ մասեր :

ԽՄԲ .



Կիւրիւնցիներ գաղթակաճութեան շրջանին Հալէպի մէջ